

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ



ՀԱՄԱՅՆՔԻ ԱՆՁՆԱԳԻՐ

ՀԱՄԱՅՆՔ	ՍԱՐՈՒԽԱՆ
ՄԱՐԶ	ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔ



1. ՊԱՏՄԱԿԱՆ ԱԿՆԱՐԿ

Հիմնադրվել է Ք.ա. 2-1 հազարամյակներում կառուցված կիկլոպյան ամհոցի հարավ-արևմտյան կողմում Ք.ա. 1-ին հազարամյակում: Ամրոցը՝ որի ավերակները նշմարվում էին Ծաղկավանքի բլուրի վրա, ունեցել է ստորերկրյա թունել դեպի մոտակա գետը: Ամրոցը համարվել է Ռուսա 1-ին արքայի կողմից հիշատակված Վելակունի (Գեղարքունիք) երկրի 23 թագավորներից մեկի նստավայրը: Գյուղի տարածքից հայտնաբերվել է արտաշիսյան սահմանաքար: Ինչը վկայում է, որ Արտաշես 1-ին Բարեպաշտ արքայի օրոք (Ք.ա. 189-160թթ) այստեղ արդեն գյուղական համայնք է ձևավորված եղել:

Միջնադարում եղել է Գեղարքունիքի ամենախոշոր գյուղը, իսկ 17-րդ դարում եղել է գավառապետի նստավայրը: Գավառապետ մելիքներից հայտնի են Մելիք Փարսադանը, Մելիք Մալխասը և Մելիք Մանուչարը: Վերջինս անվանատուն է գյուղից արևելք ընկած լեռներին և հարակից Մանուչարի հովտին: Իր աստվածահաճո գործերով հայտնի է եղել Մխիթար եպիսկոպոսը, ով Մելիք Փարսադանից հալածվելով հաստատվել է Սևանա կղզում և նշանակվել վանահայր:

Գյուղը մինչև 1928թ. կոչվել է Ղալիղարդաշ, անուն որը եղել գյուղի հայ մելիքներից մեկի (եհիի պապի) մականունը: 18-րդ դարի կեսերին գյուղը հիմնովին ավերվել է լեզգիների կողմից: 19-րդ դարի սկզբների Երևանի խանի ջանքերով այստեղ հաստատվել են քոչվոր թաթարներ, որոնք կլիմային չդիմանալով շուտով հեռացել են:

Սարուխանի ներկայիս բնակիչների նախնիները 116 տնտեսություն 700 շնչով եկել են Հին Բայազետի Ջանկիզոր (Ջանկյազուր) և Սրբահան (Սուրբ Օհան) գյուղերից 1830թ. հունիսին: 1850թ. գյուղացիների ջանքերով բացվել է գյուղի առաջին դպրոցը, իսկ 1897թ. պետական երկրասյա դպրոց:

Սարուխանցիները աչքի են ընկել թե առաջին և թե երկրորդ աշխարհամարտերի տարիներին: Հայրենական Մեծ պատերազմին մասնակցել են 1273 սարուխանցիներ որոնցից 440-ը չեն վերադարձել: Հայրենական Մեծ պատերազմի տարիներին Սարուխանը տվել է 3 գեներալ, 12 գնդապետ, 13 փոխգնդապետ և բազմաթիվ սպաներ:

Համայնքը ընդգրկված է Հայաստանի համայնքների հանրապետական ստոցիացիայում, ինչպես նաև միջհամայնքային միավորման անդամ է: Բյուջետային ոլորտում ամեն տարի արձանագրվում են հաջողություններ: Բյուջեի կատարողական մասը հասնում և գերազանցում է 100 տոկոսը:

Բնակչության հիմնական մասը զբաղվում է արտագնա աշխատանքով: Մեծ տոկոս է կազմում գործազուրկների թիվը, աշխատատեղեր չլինելու պատճառով բարձրագույն կրթությամբ շատ մասնագետներ դուրս են մնացել աշխատանքային ոլորտից:

Կենտրոնական ճանապարհը ամբողջությամբ ասֆալտապատ է, հեռահաղորդակցության և տրանսպորտային կապը գտնվում է բավարար վիճակում: Փողոցները լուսավորված են: Կանոնավոր կերպով կատարվում է աղբահեռացումը: Հիմնական խնդիրներից մեկը Մեծ Սպիտակասարից մինչև Սարուխան խմելու ինքնահոս ջրագծի կառուցումն է:

Գյուղն ունի երեք միջնակարգ դպրոց, արվեստի դպրոց, երկու մանկապարտեզ: Վերանորոգվել են Մշակույթի տունը և Բժշկական ամբուլատորիան, որը սպասարկում է ոչ միայն Սարուխան, այլ նաև Լանջաղբյուր և Գեղարքունիք գյուղերի բնակչությանը:

Վերանորոգվել են 1893թ. կառուցված ս. Գևորգ եկեղեցին և 8-9դդ. Թուխ Մանուկ մատուռը: Ընթացքի մեջ են ս. Աստվածածին եկեղեցու կառուցման աշխատանքները: Սարուխանը տվել է գիտության, մշակույթի, արվեստի, զինվորական, քաղաքական, պետական և այլ ոլորտների բազում նշանավոր մարդիկ:

2. ԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ ՆԿԱՐԱԳԻՐ

Սարուխան գյուղը գտնվում է Գեղամա լեռների ստորոտում, հս. լ.40° 17' 21", ավ. ե. 45°08'03", Գավառագետի Գռիձոր և Կուկուձոր վտակների միջև: Հյուսիսից սահմանակից է Գանձակ, հարավից և հարավ-արևելքից՝ Լանջաղբյուր, հյուսիս-

արևելքից՝ Կարմիրգյուղ, իսկ արևմուտքից՝ Գեղամա լեռներին: Վարչական տարածքը 6652,03 հա է, որի մեծ մասը ալպյան արոտներ են: Ռելիեֆը կտրտված է, ունի թեքություն արևելքից արևմուտք: Կլիման չափավոր ցամաքային է, օդի հարաբերական խոնավությունը միշտ ցածր 35-50% : Ամառը զով է, ձմեռը չափավոր ցուրտ: Ջերմաստիճանի բացարձակ նվազագույնը դիտվել է հունվարին -32°C, իսկ բացարձակ առավելագույնը՝ 33°C, հուլիս-օգոստոս ամիսներին: Ձնածածկույթի տևողությունը տատանվում է 90-200 օր: Տարեկան տեղումների քանակը 400-500մմ: Քամիները հաճախակի են, գերակշռող ուղղությունը՝ հարավ- արևմտյան: Գյուղի կենտրոնական մասի ամենացածր կետում են գտնվում աղբյուրները՝ վարկեանում 1մ³ ելքով: Այստեղից խմելու ջուրը պոմպերով մղվում է գյուղի թաղամասեր և հարևան Կարմիրգյուղ:

Սարուխանի տարածքում կան շինանյութի՝ բազալտ քարի, ավազի, կավի և այլ հանքավայրեր: Գոյություն ունի կան հանքային բուժիչ ջրեր, որոնք չեն օգտագործվում:

3. ՀԱՄԱՅՆՔԻ ԿԼԻՄԱՅԱԿԱՆ ՀԱՍԱՌՈՏ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Մթնոլորտային տեղումների միջին տարեկան քանակը (մմ)	400-500
Օդի միջին ջերմաստիճանը հունվարին (°C)	-23
Օդի միջին ջերմաստիճանը հուլիսին (°C)	28

4. ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Համայնքում ընդգրկված բնակավայրերը և դրանց հեռավորությունը համայնքի կենտրոնից	Սարուխան	
1.1)		
1.2)		
1.3)		
2. Նախկին (ՀԽՍՀ) վարչական շրջանի անվանումը	Կամոյի	
3. Համայնքի հեռավորությունը՝		
3.1) մայրաքաղաքից (կմ)	100	
3.2) մարզկենտրոնից (կմ)	8	
3.3) պետական սահմանից ուղիղ գծով (կմ)	38	
3.4) նախկին շրջկենտրոնից (կմ)	8	
3.5) միջպետական նշանակության ավտոճանապարհից (կմ)	15	
3.6) երկաթուղային կայարանից (առկայության դեպքում) (կմ)		
4. Համայնքի բարձրությունը ծովի մակերևույթից (մ)	2000	
5. Համայնքի վարչական տարածքը (քառ. կմ/հա)	67,8983	6789,83
6. Սահմանակից համայնքների անվանումները	Գանձակ, Կարմիրգյուղ, Լանջաղբյուր	
7. Համայնքապետարանի էլեկտրոնային փոստի հասցեն	sarukhan.gegharquniq@mta.gov.am	
8. Համացանցային պաշտոնական կայքի հասցեն	www.sarukhan.am	
9. Համայնքի ղեկավարի հեռախոսահամարը	077-21-40-00	
10. Համայնքապետարանի հեռախոսահամարը		

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՆՁՆԱԳԻՐ

11. Համայնքի հեռախոսային կողը	0264
12. Համանքում փոստային բաժանմունքի առկայությունը (այո, ոչ)	այո
13. Համայնքապետարանի փոստային դասիչը	
14. Հաստատված գլխավոր հատակագծի առկայությունը (այո, ոչ)	այո
15. Քաղաքացիների սպասարկման գրասենյակի առկայությունը (այո, ոչ)	ոչ

5. ԲՆԱԿՉՈՒԹՅՈՒՆ, ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԿԱԶՄԸ

	2018թ.
1. Մշտական բնակչության թվաքանակը	8370
2. Գրանցված ծնունդների քանակը	81
2. Մահացության դեպքերի քանակը	58
3. Ամուսնությունների քանակը	
4. Ամուսնալուծությունների քանակը	0
5. Տնային տնտեսությունների թիվը	2985
6. Ընտանեկան նպաստ ստացող տնային տնտեսությունների քանակը	270
7. Կենսաթոշակառուների քանակը	1220
8. Հաշմանդամություն ունեցող անձանց քանակը	745

6. ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ, ԿՐԹԱԿԱՆ, ՄԱՐԶԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ

	2018թ.
1. Գրադարանների քանակը	1
2. Արվեստի դպրոցների քանակը	1
3. Երաժշտական դպրոցների քանակը	0
4. Նախադպրոցական հիմնարկների քանակը	2
5. Հանրակրթական դպրոցների քանակը	3
6. Նախնական մասնագիտական (արհեստագործական) ուսումնական հաստատությունների քանակը	0
7. Միջին մասնագիտական ուսումնական հաստատությունների քանակը	0
8. Բարձրագույն ուսումնական հաստատությունների քանակը	0
9. Մարզադպրոցների քանակը	0

7. ԲՆԱԿԵԼԻ ՖՈՆԴ

	2018թ.
1. Համայնքի բնակարանային ֆոնդի ընդհանուր մակերեսը (մ ²)	
2. Բազմաբնակարան շենքերի ընդհանուր թիվը	0
3. Բնակելի տների (առանձնատների) ընդհանուր թիվը	1800

8. ՀՈՂԱՅԻՆ ՖՈՆԴ ԵՎ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ

	2018թ.
--	---------------

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՆՁՆԱԳԻՐ

1. Հողեր, ընդամենը (հա)	6789.83
2. Գյուղատնտեսական նշանակության հողեր (հա)	5943.22
3. Բնակավայրերի ընդհանուր տարածքը (հա)	504.9
4. Խոշոր եղջերավոր անասունների գլխաքանակը	1138
6. Մանր եղջերավոր անասունների (ոչխար և այծ) գլխաքանակը	351
7. Խոզերի գլխաքանակը	40
8. Գյուղատնտեսական տեխնիկա	24
8.1 տրակտորներ (քանակը)	20
8.2 կոմբայններ (քանակը)	4
9. Գյուղացիական տնտեսությունների թիվը	1600

9. ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐ

1. Էլեկտրական ենթակայանների քանակը	1
2. Համայնքում գազիֆիկացման առկայությունը (այո, ոչ)	այո
3. Համայնքում աղբավայրի առկայությունը (այո, ոչ)	ոչ
4. Գերեզմանատան առկայությունը համայնքում (այո, ոչ)	այո
5. Համայնքային ենթակայության ճանապարհների ընդհանուր երկարությունը (կմ)	70
6. Կոմունալ և ճանապարհաշինական տեխնիկայի առկայությունը	
6.1 Ինքնաթափ բեռնատար մեքենաների քանակը	20
6.2 Էքսկավատորների քանակը	4
6.3 Թրթուռավոր տրակտորների քանակը	0
6.4 Գրեյդերների քանակը	1
6.5 քանակը	
6.6 Աղբատար մեքենաների քանակը	0
6.7 Բազմաֆունկցիոնալ կոմունալ մեքենաների քանակը	0
6.8 Վակումային փոշեկուլ մեքենաների քանակը	0
6.9 Ավտոաշտարակների քանակը	0
7. Համայնքի տարածքով անցնող միջպետական և հանրապետական նշանակության ավտոճանապարհների ընդհանուր երկարությունը (կմ)	0
8. Համայնքի տարածքում գործող առևտրային բանկերի մասնաճյուղերի առկայությունը (այո, ոչ) և դրանց քանակը	0
9. Ներհամայնքային երթուղիների առկայությունը (այո, ոչ)	0

10. ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ

Համայնքի վարչական բյուջեի եկամուտներ (հազ. դրամ)

	Ընդունված բյուջե	Փաստացի
1. Ընդամենը եկամուտներ	217181.6	
2. Հարկային եկամուտներ, ընդամենը այդ թվում՝	40558.2	
2.1 հողի հարկ	8096.2	
2.2 գույքահարկ	32462.0	
3. Պաշտոնական տրանսֆերտներ, ընդամենը	163958.8	

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՆՁՆԱԳԻՐ

3.1 դոտացիա	160924.9	
3.2 սուբվենցիա	3033.9	
4. Մուտքեր հողի օտարումից		

Համայնքի վարչական բյուջեի ծախսեր (հազ. դրամ)

	Ընդունված բյուջե	Փաստացի
1. Ընդամենը ծախսեր	191692.7	

Համայնքի ֆոնդային բյուջեի եկամուտները (հազ. դրամ)

	Ընդունված բյուջե	Փաստացի
1. Ընդամենը ֆոնդային բյուջեի եկամուտներ	44675.0	

Ֆոնդային բյուջեի ծախսեր (հազ. դրամ)

	Ընդունված բյուջե	Փաստացի
1. Ընդամենը ծախսեր	44675.0	

11. ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌՎՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐ

1. Համայնքապետարանի աշխատողների թվաքանակը, մարդ որից` 1.1 համայնքային ծառայողներ	27 10
2. Ապարատի պահպանման ծախսերը, ընդամենը (հազ. դրամ)	70890.0
3. Ավագանու անդամների թվաքանակը	10

12. ՀԱՄԱՅՆՔԻ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ

Հիմնախնդիրը	Ակնկալվող լուծումը
Գործազրկություն	Փոքր և միջին ձեռնարկատիրության զարգացում, աշխատատեղերի ստեղծում
Ճանապարհների վիճակը	Վերանորոգում, բարեկարգում, ասֆալտապատում
Փողոցների լուսավորում	Փողոցային լուսավորության ցանցի ընդլայնում, նորի կառուցում
Մարզադպրոցի բացակայություն	Տարբեր ծրագրերի և բարերարների աջակցությամբ մարզադպրոցի կառուցում
Թիվ 1 մանկապարտեզի շենքի անբավարար վիճակը	Մանկապարտեզի շենքի հիմնանորոգում
Համայնքի երկու թաղամասերն իրար կապող կամուրջի բացակայություն	Գյուլում գետի վրա կամուրջի կառուցում
Ջրահեռացման ցանցի անմխիթար վիճակ	Վերանորոգել ջրահեռացման ներքին ցանցը